ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*ԽՍ-262-28.08.2019-ՊԻ-011/0*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

No.	*Առաջարկության հեղինակը*	*Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը*	*Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)*	*Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը*	*Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը*
1.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին կետ	Առաջարկում ենք հոդվածի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Համալիր թույլտվության պայմանագրի ձևը և դրանից բխող իրավունքի գրանցումը»	Ընդունվել է, կատարվել է փոփոխություն	Ընդունվել է
2.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	(…) առաջարկում ենք «իրավունքների» բառը փոխարինել «իրավունքի» բառով և, ըստ այդմ, նույն փոփոխությունը կատարել 970-րդ հոդվածի վերնագրում	Ընդունվել է, կատարվել են փոփոխություններ	Ընդունվել է
3.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ կետ	(…) որոշակիացնել շարադասությունը	Ընդունվել է, կատարվել են փոփոխություններ	Ընդունվել է
4.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	(…) անհրաժեշտ է նկատի ունենալ այն, որ «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածից բխում է, որ արդյունաբերական նմուշի դեպքում տրվում է վկայագիր: Ուստի, հարկ է հաշվի առնել այդ հանգամանքը ևս նախագծի 3-րդ հոդվածում:	Հաշվի է առնվել. առաջարկվող սահմանումն ընդհանուր բնույթի է և ներառում է համալիր թույլտվության ցանկացած պայմանագրից ծագող իրավունքի գրանցումը	Ընդունվել է